



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)
(2008թ. հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 20-ը)**

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

1.1 Օրենքներ

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին” ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի սեպտեմբերի 30
Համարը.	ՀՕ-167-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 66 (656), 05/11/2008թ.
Ուժի մեջ է.	15 նոյեմբերի 2008թ

Համառոտ նկարագիր

Սահմանվել է ստուգման ընթացքի կասեցման ժամանակահատվածի առավելագույն տևողություն, այն չի կարող ավելի լինել քան 90 աշխատանքային օր, իսկ օտարերկրյա պետություններ հարցումներ կատարելու դեպքերում՝ հարցման պատասխանը ստանալուց հետո 10 աշխատանքային օր:

Փաստաթուղթ.	“Ակցիզային հարկի մասին” ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի սեպտեմբերի 30
Համարը.	ՀՕ-167-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 66 (656), 05/11/2008թ.
Ուժի մեջ է.	15 նոյեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Օրենքի լրացումով սահմանվել է Հայաստանի Հանրապետությունում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա հետևյալ արտադրատեսակների համար նախատեսված ակցիզային յուրաքանչյուր դրոշմանիշների ձեռքբերման գները.

- էթիլային սպիրտի արտադրանք՝ 100 դրամ,
- ակոհոլային խմիչքի արտադրանք՝ 50 դրամ,
- ծխախոտի արտադրանք՝ 25 դրամ:

Առանձնահատկությունը կայանում է նրանում, որ **մինչ այդ նշված դրույքաչափերը սահմանված էին կառավարության որոշմամբ:**

Միաժամանակ, սահմանվել են բացառություններ բռնագրավված, հօգուտ պետության տիրագործի ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած ապրանքների դրոշմավորման համար ակցիզային դրոշմանիշների ձեռք բերման համար:

Փաստաթուղթ.	“Հարկային ծառայության մասին” ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 23
Համարը.	ՀՕ-176-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (659), 26/11/2008թ.՝
Ուժի մեջ է.	27 նոյեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Մի քանի էական նորությունների մասին.

- հարկային ծառայության պաշտոնների անվանացանկի Ա, Բ և Գ խմբերում թափուր պաշտոն առաջանալու դեպքում հարկային մարմնի ղեկավարը կարող է 15-օրյա ժամկետում **նշանակում կատարել նաև մաքսային ծառայության առաջատար կամ գլխավոր պաշտոն զբաղեցնող մաքսային ծառայողներից, հարկային կամ մաքսային մարմիններում քաղաքացիական ինչպես նաև հայեցողական պաշտոն** զբաղեցնող անձանցից, հարկային ծառայության կադրերի ռեզերվից
- հարկային մարմնի զարգացման ֆոնդը կազմավորվում է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով հարկային մարմնի քննությանը վերապահված իրավախախտումների գործերով նշանակված վարչական տուգանքների 30 %-

ի մասհանումների հաշվին

- Բացի նրանից, որ հստակ սահմանվեց, որ հարկային մարմնի և հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը գանգատարկելու դեպքերում դիմում-գանգատները հարկային մարմնի կողմից քննության են առնվում և դրանց վերաբերյալ որոշումներ է ընդունվում 30 օրվա ընթացքում, նշվեց, որ առանձին դեպքերում հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ **նշված ժամկետը կարող է երկարաձգվել 15 օրով**, ինչի մասին իրազեկում են դիմում-գանգատ ներկայացնողին:

Փաստաթուղթ.	“Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին” ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 22
Համարը.	ՀՕ-177-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (659), 26/11/2008թ.
Ուժի մեջ է.	06 դեկտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացումով հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ՝ **տաքսամետրով (սակաչափիչով) կահավորված** մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումների իրականացման գործունեության դեպքում:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 22
Համարը.	ՀՕ-180-Ն
Հրապարակումը.	է ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (659), 26/11/2008թ.
Ուժի մեջ է.	06 դեկտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխություններով ստուգում կազմակերպելու և անցկացնելու իրավասություն ունեցող մարմինների անվանումները համապատասխանեցվել են ՀՀ կառավարության կազմում կատարված փոփոխություններին:

Փաստաթուղթ.	“ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի օգոստոսի 21
Համարը.	ՀՕ-155-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 59 (649), 24/09/2008թ.՝
Ուժի մեջ է.	04 հոկտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով կարգավորվել են մաքսային բնագավառին առնչվող մի շարք հարաբերություններ, մասնավորապես “Ժամանակավոր ներմուծում վերամշակաման համար” մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակման արդյունքում առաջացած **թափոնների և մնացորդների մաքսային ձևակերպումներին վերաբերվող դրույթները**: Նախատեսվել է, որ այդ մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո գոյացած թափոններն ու մնացորդները ենթակա են հայտարարագրման, որն անհրաժեշտ է այդ թափոնների և մնացորդների նկատմամբ վերահսկողության իրականացման համար:

Հետբացթողումային հսկողության արդյունքների փաստաթղթավորումը

համապատասխանեցվել է “Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին” ՀՀ օրենքի դրույթներին՝ նախատեսելով ստուգման ակտի կազմում: Մաքսային ընթացակարգերի պարզեցման նպատակով նախատեսվել է, որ հետբացթողումային հսկողության արդյունքում մաքսային վճարների գծով չկատարված պարտավորությունների հայտնաբերման դեպքում կրկնակի մաքսային հայտարարագրման անհրաժեշտությունը կփոխարինվի ճշգրտումների փաստաթուղթ կազմելով, որը կհանդիսանա նախկին մաքսային հայտարարագրի անբաժանելի մասը: Արդյունքում մայր մաքսային հայտարարագիրն անվավեր չի ճանաչվի, նոր մաքսային հայտարարագիր լրացնելու անհրաժեշտություն չի առաջանա:

Մաքսային օրենսգրքի համապատասխան հոդվածներում կատարվել են լրացումներ կապված

“Քրեական դատավարության օրենսգրքով” մաքսային մարմիններին նախաքննություն իրականացնելու լիազորություններ վերապահելու հետ: ՀՀ մաքսային օրենսգրքի 183-րդ հոդվածում տրված **“մաքսանենգության” հատկանիշները համապատասխանեցվել են** ՀՀ Քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով սահմանված նույն արարքի հատկանիշներին:

Հստակեցվել է նաև մաքսային իրավախախտումների շրջանակը, որոնց դեպքում մաքսային մարմիններն իրականացնում են վարույթ (հետաքննություն, նախաքննություն կամ վարչական վարույթ), քանի որ արարքի որակումն ըստ հասարակական վտանգավորության աստիճանի՝ հանցանք կամ զանցանք որոշվում է իրավախախտման քննության ընթացքում: Կարգավորվել են մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մասնակի կորստի, հանձնման, օտարման, ոչնչացման դեպքերում **վարչական պատասխանատվության իրավական հիմքերը**, սահմանվել է վարչական վարույթով կայացված որոշման ուժի մեջ մտնելու պահը:

Կարգավորվել են նաև լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների նկատմամբ հսկողության իրականացման ժամանակ առաջացող հարաբերությունները: Վերադաս մաքսային մարմնին վերապահվել է մաքսային գործի հետ կապված լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվող անձանց ռեեստրի վարման գործառույթ՝ վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով:

Սահմանվել է մաքսային գործի հետ կապված լիցենզավորման ենթակա գործունեության նոր տեսակ՝ **“մաքսային հսկողության տարածքի կազմակերպում”**(տերմինայ), որի արդյունքում ՀՀ ներմուծվող ապրանքների մաքսային հսկողությունը կիրականացվի առավել արդյունավետ:

Լրացումներ են կատարվել նաև մաքսային պահեստներին վերաբերող դրույթներում՝ դրանցում ապրանքների շարժի նկատմամբ հսկողության ուժեղացման և հաշվառման վարման հետ կապված հարաբերությունների կարգավորման նպատակով:

Փաստաթուղթ.	“Մաքսային ծառայության մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի նոյեմբերի 17
Համարը.	ՀՕ-175-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (659), 26/11/2008թ.
Ուժի մեջ է.	06 դեկտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով մաքսային ծառայության պաշտոնների անվանացանկի փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է կառուցվածքային բարեփոխումներով: Մաքսային ձևակերպումների ժամանակ մաքսային զննման գործառույթն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի համապատասխան ստորաբաժանման կողմից, որում նախատեսվում են զննման հերթափոխեր և բաժանմունքներ: Հետևաբար դրանց գործունեության ընթացքն ապահովելու համար **մաքսային ծառայության պաշտոնների անվանացանկը լրացվել է** վերադաս մաքսային մարմնի բաժանմունքի պետի, բաժանմունքի պետի տեղակալի, հերթափոխի պետի և հերթափոխի պետի տեղակալի պաշտոններով:

Մաքսային ծառայողների նյութական խրախուսման ֆոնդի վերաբերյալ դրույթների փոփոխությունները պայմանավորված են հարկային ծառայողների համանման ֆոնդի վերաբերյալ դրույթների հետ համապատասխանեցման անհրաժեշտությամբ: Փոփոխություններով **համապատասխանեցվել են հարկային և մաքսային ծառայողների նյութական խրախուսման ֆոնդերին** վերաբերող դրույթները:

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 30
Համարը.	1269-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 68 (658), 29/10/2008թ.
Ուժի մեջ է.	29 նոյեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է.

- ՀՀ-ում արտադրվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշներով պարտադիր **դրոշմավորման կարգը**,
- ՀՀ-ում արտադրվող ոգելից խմիչքի, էթիլային սպիրտի և ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար թույլատրելի չափերով **տարաների (տուփերի) ցանկը**,
- ՀՀ-ում արտադրվող ակցիզային դրոշմանիշներով պարտադիր **դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը**:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 1999թ. հոկտեմբերի 26-ի թիվ 662 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 16
Համարը.	1165-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 64 (654), 29/10/2008թ
Ուժի մեջ է.	08 նոյեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է “Ներմուծողների մոտ առկա **“2006” թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշներով** դրոշմավորված ապրանքների փաստացի մնացորդների վերադրոշմավորման” կարգը: Սահմանվել է, որ “2006” թվագրված նմուշի ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների մնացորդները վերադրոշմավորելու նպատակով ներմուծողներն ակցիզային նոր նմուշի դրոշմանիշները ձեռք են բերում վերադաս մաքսային մարմնից՝ ներկայացնելով դիմում և համապատասխան տեղեկանքները:

Միաժամանակ, սահմանվել է, որ 2008թ. նոյեմբերի 25-ից արգելվելու է ՀՀ ներմուծված՝ “2006” թվագրված ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1798 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 16
Համարը.	1181-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 64 (654), 29/10/2008թ
Ուժի մեջ է.	30 հոկտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Նշված 1798-Ն որոշումը վերաբերվում էր **հարկային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի** անդամների առաջադրման չափանիշներին:

Հիմնական փոփոխություններն են (բացի տեխնիկականների).

- հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահը, այլ ոչ թե նա ներկայացնում է ՀՀ կառավարության հաստատմանը
- հանձնաժողովի անդամ կարող են դառնալ նաև հայեցողական կամ մաքսային ծառայության կամ քաղաքացիական ծառայության այլ ներկայացուցիչներ
- սահմանվեց, որ հանձնաժողովի անդամ են ՀՀ վարչապետի ներկայացուցիչը, մեկ անդամ՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից և 5 անդամ՝ հարկային ծառայողներից:

Փաստաթուղթ.	“Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 30
Համարը.	1207-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 66 (656), 05/11/2008թ
Ուժի մեջ է.	06 նոյեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Սա փաստորեն իրենից ներկայացնում է աղքատության հաղթահարման հայաստանյան երկրորդ ծրագիրը, անվանված արդեն **կայուն զարգացման ծրագիր**: Սա երկարաժամկետ հատվածի հայաստանյան ամենալայն ծրագիրն է և հանդիսանում է կողմնորոշիչ ու ուղղորդիչ մնացած բոլոր ծրագրերի, ներառյալ միջնաժամկետ ծախսային, բյուջետային, ոլորտային և այլ ծրագրերի համար:

Նշված որոշման հիման վրա պետք է մինչև 2009թ. հունվարի 31-ը հաստատվեն

համապատասխան միջոցառումների ցանկեր, ըստ նախարարությունների և այլ պետական կառավարման մարմինների, իսկ ավելի վաղ, մինչև 2008թվականի վերջը պետք է հաստատվի մոնիթորինգի ցուցանիշների համակարգը:

Մի քանի հիմնական դրույթներ, հանգամանքներ.

- այս ծրագիրը փաստորեն փոխարինում է ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշմամբ հաստատված “Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին” (ԱՀՌԾ): 2003-2015թթ. համար մշակված այդ **ծրագրի վերանայման` նորի մշակման** պատճառներ էին.
 - o ծրագրվածից կրկնակի ավելի տեմպերով տնտեսական աճը` վերջին տարիների ընթացքում
 - o աշխարհում 2004թվականից` աղքատության չափման նոր մեթոդաբանության կիրառումը
 - o կայուն աճի ապահովման, այսինքն երկրի հիմնական ուղղորդող փաստաթուղթ դարձնելու կարիքը, որը որ համահունչ կլինի կառավարության` երկրորդ սերնդի բարեփոխումների ամբողջական ընդգրկմանը
- նոր, 2009-2021թթ. ԿԶԾ-ը ունենալու է **3 գերակայություն**. առաջինը. կայուն (արագ տեմպերով)տնտեսական աճ, երկրորդը. հասցեական սոցիալական և եկամտային քաղաքականություն և երրորդը. **երկրի կառավարման համակարգի արդիականացում**: Մրանց իրացման գործընթացը զուգակցված է լինելու շրջակա միջավայրի պահպանության խնդիրների լուծմամբ
- 3-րդ ռազմավարական գերակայությունը ենթադրում է. արդյունավետության բարձրացում պետական կառավարման բնագավառում, հակակոռուպցիոն նոր ռազմավարական փաստաթղթի մշակում, որոշումների կայացման ընթացքում հանրային մասնակցության աստիճանի բարձրացում, էլեկտրոնային կառավարման (e-government) համակարգերի ինտենսիվ ներդրում և այլն: Պետության ֆինանսական կարողությունների աճը ենթադրում է.
 - o Մինչև 2021թվականը հասնել “հարկային մուտքեր/ՀՆԱ” ցուցանիշի 25.6 տոկոսային ցուցանիշի, ինչը ենթադրում է տարեկան աճ մոտ 0.4 տոկոսով
 - o Ֆինանսական այդ աճը պետք է ձեռք բերվի առանց հարկային դրույքաչափերի ավելացման
 - o Աճի հիմքում պետք է դրվեն հարկային ու մաքսային վարչարարական բարեփոխումները, գործընթացների պարզեցումը, թափանցիկ աշխատանքը: Հարկային ու մաքսային վարչարարության **ռազմավարական կատարելագործումը, ինստիտուցիոնալ կարողությունների աճի ապահովումը կհանդիսանա պետական կառավարման հիմնական գերակայությունը**:
- 2009-2021թթ. մակրոտնտեսական մի քանի կանխատեսումներ և նպատակային ցուցիչներ.
 - o միջին տարեկան տնտեսական **աճ միջինը 7 տոկոս**
 - o տնտեսության կառուցվածքի վերափոխումներ. անցում աշխատատար ճյուղերից դեպի կապիտալատարը (2012թ-ից) և ապա, դեպի “գիտելիքահենքը”
 - o 2021թ. 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի քառապատկում` 2007թ. համեմատ
 - o Գնաճի նպատակադրում. 3.5 +/- 1.5 տոկոս: **ՀՆԱ դեֆլյատորը կլինի մի փոքր ավելի մեծ**
 - o Ներդրումներ/ՀՆԱ հատվածում կունենանք նվազում 37-ից 29 տոկոսի, որ բացատրվելու է ներդրումների կառուցվածքի փոփոխություն, **անցում արտադրողական կապիտալ ներդրումների**
 - o Պետական պարտքի կառուցվածքում կաճի ներքին պարտքը, համեմատ արտաքինի
 - o Արտաքին առևտրում էականորեն աճելու է արտահանման բաժինը, համարյա հասնելով ներմուծմանը և ընթացիկ հաշվի դեֆիցիտի մակարդակը հասցնելով ՀՆԱ 4.4. տոկոսի
- Ծրագրի 5.7. “**Հարկային քաղաքականություն և վարչարարություն**” հատվածում (կետեր 272-278) խոսք է գնում հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագրի հետևողական իրագործման մասին, մասնավորապես.
 - ✓ Ռիսկի գործոնների հաշվառմամբ ստուգումների մեխանիզմի ներդրմանը
 - ✓ Հարկերի ինքնագնահատման (կամավորապես վճարման) շրջանակների ընդլայնմանը
 - ✓ Ընթացակարգերի պարզեցմանը:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ.	“ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2008թ. օգոստոսի 20-ի “ՀՀ պետական եկամուտների նախարարության 2001 թվականի ապրիլի 16-ի թիվ 02/456
-------------	--

	հրամանում փոփոխություններ կատարելու մասին” հրաման
Ամսաթիվը.	2008 թվականի օգոստոսի 20
Համարը.	11-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 36 (310), 22/10/2008թ
Ուժի մեջ է.	20 օգոստոսի 2008թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով՝ “Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին” հրահանգի հավելված 2-ի “Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի) կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտների մասին տեղեկության” 9-րդ սյունակի լրացման կարգի “այդ թվում նվազեցվող եկամուտների” բառերը փոխարինվել է “բացառությամբ նվազեցվող եկամուտների” բառերով: Փոփոխությունը կապված է հարկային մարմիններ **ներկայացվող տեղեկությունների ծավալի կրճատման հետ**, որոնք չեն առաջացնում հարկային եկամուտներ:

Փաստաթուղթ.	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2008թ. հոկտեմբերի 15-ի “Շահութահարկով հարկման նպատակով համախառն եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսերի մասին” պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը.	2008թ. հոկտեմբերի 15
Համարը.	10
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 37 (311), 03/11/2008թ
Ուժի մեջ է.	15 հոկտեմբեր 2008թ.

Համառոտ նկարագիր

Պաշտոնապես պարզաբանվել է “Շահութահարկի մասին” ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ համախառն եկամտի ստացման հետ կապված ծախսերի անհրաժեշտությունը տարաբնույթ, երկիմաստ մեկնաբանությունը՝ օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով սահմանված ծախսերի հետ, երբ դրանց մեծությունը գերազանցում է համախառն եկամտին, կամ դրանց կատարման որոշ ամիսներին հարկ վճարողը եկամուտ չի ստացել: Հստակեցվել է “Շահութահարկի մասին” ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ; 5-րդ և 6-րդ մասերով սահմանված **ծախսերի նվազեցման հաշվետու ժամանակաշրջանը**:

Փաստաթուղթ.	“ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2008թ. սեպտեմբերի 22-ի “ՀՀ պետական եկամուտների նախարարության 2001 թվականի ապրիլի 16-ի թիվ 02/456 հրամանում փոփոխություն կատարելու մասին” հրաման
Ամսաթիվը.	2008 թվականի սեպտեմբերի 22
Համարը.	12-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 38 (312), 07/11/2008թ
Ուժի մեջ է.	22 սեպտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով՝ “Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին” հրահանգի հավելված 12.1 կետից հանվել է “Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության աշխատողները” բառերը:

Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամտից այլևս չեն նվազեցվելու ՀՀ զինվորական դատախազության աշխատողների ծառայության հետ կապված եկամուտները:

Այս փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ “Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին” ՀՀ օրենքում կատարվել է փոփոխություն, ըստ որի՝ “ՀՀ զինվորական դատախազության աշխատողները” **այլևս չեն համարվում զինծառայողներին հավասարեցված անձինք**:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. հուլիսի 29-ի թիվ 1149-Ն որոշման փոփոխություն կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը.	2008 թվականի օգոստոսի 28
Համարը.	976-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 56 (646), 10/09/2008թ
Ուժի մեջ է.	20 սեպտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ կրճատվել է Հայաստանի Հանրապետությունում **պարտադիր հավաստման**

Ենթակա ապրանքների ցանկը` հիմք ընդունելով այն փաստը, որ “Համապատասխանության գնահատման մասին” ՀՀ օրենքի համաձայն` համապատասխանության պարտադիր հավաստումը կատարվում է տեխնիկական կանոնակարգերով սահմանված դեպքերում: Ցանկը շարադրվել է նոր խմբագրությամբ: Նախկինում այդ ցանկում ընդգրկված ապրանքտեսակները կրճատվել են` հասցվելով մինչև 16 անունի: Ցանկում թողնվել են միայն այն ապրանքները, որոնք չունեն տեխնիկական կանոնակարգ և մանկական սնունդը, որը թեև ունի տեխնիկական կանոնակարգ, սակայն ցանկում պահպանվել է անվտանգության նկատառումներով: Արդյունքում կրճատվել է ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ ժամանակը, արագացվել է մաքսային ձևակերպման ընթացակարգը:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. մարտի 24-ի թիվ 236 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը.	2008 թվականի սեպտեմբերի 11
Համարը.	1056-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 60 (650), 01/10/2008թ
Ուժի մեջ է.	11 հոկտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

“Մաքսային հսկողության մեթոդիկական սահմանելու մասին” ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ նախատեսող այս որոշման ընդունումը պայմանավորված էր մաքսային մարմիններում ներդրված **ինքնահայտարարագրման գործընթացի պարզեցմամբ**, փաստաթղթային շրջանառության կրճատմամբ և մաքսային հսկողության ավտոմատացմամբ: Որոշման ընդունումը հնարավորություն է ընձեռնել TMW ավտոմատ համակարգի միջոցով հայտարարագրի վրա կատարել մաքսային հսկողության ուղիների նշագրումը և ավտոմատ համակարգի միջոցով ճշտել մաքսային ձևակերպումներն իրականացնող անձին: Արդյունքում մաքսային ձևակերպումների պարզեցման շնորհիվ նվազել են մաքսային տեսուչ-հայտարարատու շփումները, ձևակերպումների և հսկողության իրականացմանը ֆիզիկապես չեն մասնակցում ընտրողականության դեկավարումը և վճարների հավաստումն իրականացնող պաշտոնատար անձինք:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 1999թ. հոկտեմբերի 26-ի թիվ 662 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը.	2008 թվականի սեպտեմբերի 25
Համարը.	1073-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 61 (651), 08/10/2008թ
Ուժի մեջ է.	18 հոկտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ՀՀ կառավարության 1999թ. հոկտեմբերի 26-ի թիվ 662 որոշումը համապատասխանեցվել է “Ակցիզային հարկի մասին” ՀՀ օրենքին: Պարտավորեցնող նորմերը և այն դրույթները, **որոնք կրկնում էին նշված օրենքի համապատասխան դրույթներին**, կարգից հանվել են: Մասնավորապես որոշումից հանվել են այն դրույթները, որոնց համաձայն`

1. Վերադաս մաքսային մարմինն ուսումնասիրում է ակցիզային դրոշմանիշներ ձեռք բերելու համար ներկայացված դիմումը և կից փաստաթղթերը, որից հետո վերադաս մաքսային մարմնի ղեկավարը դիմումն ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում ընդունում է որոշում ակցիզային դրոշմանիշներ տրամադրելու մասին:
2. Վերադաս մաքսային մարմինը ներմուծողին ակցիզային դրոշմանիշները տրամադրում է 90-օրյա ժամկետում:
3. Ակցիզային դրոշմանիշներ ձեռք բերելու համար դիմումը մերժվում է, եթե ներմուծողը չի ներկայացնում պահանջվող փաստաթղթերը կամ նրա մոտ կան դրոշմանիշներ, որոնց օգտագործման մասին հաշվետվությունը սահմանված ժամկետում վերադաս մաքսային մարմին չի ներկայացվել:

Փաստաթուղթ.	“ՀՀ ներմուծվող` ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների
-------------	---

	դրոշմավորման համար “2009” թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները կիրառության մեջ դնելու մասին” ՀՀ կառավարության որոշում:
Ամսաթիվը.	2008 թվականի օգոստոսի 21
Համարը.	952-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 55 (645), 03/09/2008թ
Ուժի մեջ է.	13 սեպտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ կիրառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ծխախոտի արտադրանքի և ակոհոլային խմիչքի դրոշմավորման համար “2009” թվագրմամբ “Ծխախոտ” և “Ակոհոլային խմիչք” տեսակների ակցիզային դրոշմանիշները: Սահմանվել է նաև, որ “2008” թվագրմամբ ակցիզային դրոշմանիշների առկայության դեպքում ծխախոտի արտադրանք և ակոհոլային խմիչք ներմուծողներին կարող են տրամադրվել նաև “2008” թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներ:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 31-ի թիվ 2039-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 10
Համարը.	1179-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 64 (654), 29/10/2008թ
Ուժի մեջ է.	20 հոկտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխվել և լրացվել է մաքսային ծառայողի ատեստավորման և որակավորման **հանձնաժողովի կազմը**: Հանձնաժողովում ընդգրկվել է վարչապետի ներկայացուցիչը: Բացի այդ, խմբագրվել է հանձնաժողովի անդամի աշխատանքային ստաժի հետ կապված դրույթը: Սահմանվել է, որ հանձնաժողովի անդամն առաջադրման պահին պետք է ունենա մաքսային կամ քաղաքացիական ծառայության առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ հայեցողական պաշտոնի աշխատանքային ստաժ: Կատարվել են նաև փոփոխություններ՝ կապված մաքսային ծառայության կառուցվածքային բարեփոխումների հետ:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 1998թ. հունիսի 3-ի թիվ 338 որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 30
Համարը.	1234-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 67 (657), 12/11/2008թ.
Ուժի մեջ է.	21 նոյեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հստակեցվում են ճանապարհային ոստիկանության կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի 204-րդ հոդվածի պահանջների կիրարկումն ապահովելու հետ կապված հարաբերությունները: Սահմանվել է դրույթ, որի համաձայն՝ մաքսային ձևակերպում իրականացնող մաքսային մարմինը մաքսային հայտարարագրի 37-րդ պունակում նշում է մաքսային վճարի արտոնության ծածկագիրը, որը հանդիսանում է ճանապարհային վճարի արտոնությունը հավաստող փաստաթուղթ, որը կփոխարինի նախկինում մաքսային մարմինների կողմից տրվող արտոնության հավաստագրին: Կատարված փոփոխության արդյունքում **կրճատվել է մաքսային մարմինների կողմից տրվող փաստաթղթերի քանակը**, ինչպես նաև հնարավորություն է ընձեռվել դրանց մաքսային հսկողությունն իրականացնել ավտոմատ համակարգչային ծրագրի միջոցով:

Փաստաթուղթ.	“ՀՀ ՊԵՆ 2000թ. դեկտեմբերի 26-ի թիվ 02/1623 հրամանի մեջ լրացում կատարելու մասին” ՀՀ ԿԱ ՊԵԿ հրաման
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 16
Համարը.	136-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 34 (308), 03/10/2008թ

Ուժի մեջ է.	17 հոկտեմբերի 2008թ.
-------------	----------------------

Համառոտ նկարագիր

Հրամանով նախատեսվել է դրույթ, որի համաձայն՝ հայ-իրանական սահմանից այն կողմ գտնվող Նորդուզ բնակավայրում տեղակայված գազի հաշվիչ կայանի տվյալները հիմք են հանդիսանալու մաքսային մարմինների համար՝ մաքսային հսկողություն իրականացնելիս: Գազի մատակարարման պայմանագրի հայկական կողմի համար սահմանվել է, որ վերջինս պետք է ապահովի մաքսային մարմինների համար նշված հաշվիչ կայանի տվյալների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանները:

Փաստաթուղթ.	“Մաքսային ծառայողի էթիկայի կանոնները հաստատելու մասին” ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 16
Համարը.	160-Ա
Ուժի մեջ է.	26 հոկտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Հրամանի նպատակն է պաշտոնական գործառույթների իրականացման ընթացքում ուղղորդել մաքսային ծառայողի վարքագիծն իր վարվելակերպում և պարտականությունների կատարման մեջ՝ սահմանելով դրանց գծով նվազագույն պահանջներ, ինչպես նաև իրազեկել քաղաքացիներին, թե ինչպիսի պահվածք պետք է ակնկալել մաքսային ծառայողից: Էթիկայի կանոնների համաձայն՝ մաքսային ծառայողը պետք է հրաժարվի կատարել օրենքին հակասող հանձնարարություններ՝ պահպանելով և բարձրացնելով մաքսային ծառայողի հեղինակությունը, ունենա մասնագիտական բարձր պատրաստվածություն, իր պարտականությունները կատարելիս՝ չտոնահարի մարդկանց իրավունքները, խուսափի մաքսային ծառայողի վարքագիծը վարկաբեկող հարաբերություններից, չշարաշահի հաստատված գործնական կապերը անձնական նպատակների համար:

Մաքսային ծառայողի էթիկայի կանոնները ներառում են նաև ծառայողական էթիկայի նորմեր, որոնք են մաքսային ծառայության ամբողջականության գիտակցումը և սեփական շահերը կազմակերպության շահերին համապատասխանեցնելու պատրաստակամությունը: Ինչ վերաբերում է գործնական վարվելակերպի կանոններին, ապա մաքսային ծառայողը պետք է հետևի քաղաքակիրթ հասարակության մեջ ընդունված վարվելակարգի կանոններին և հիշի, որ իր արտաքին տեսքից ու վարվելաձևից հասարակությունը դատում է ոչ միայն իր, այլև մաքսային ծառայության մասին:

Մաքսային ծառայողը պատասխանատվություն է կրում էթիկայի կանոնների չպահպանման համար: Էթիկայի կանոնները խախտելու դեպքում մաքսային ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ միջոցները՝ **խորհուրդ, բարոյական քննադատություն**, ինչպես նաև «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված կարգապահական տույժեր:

Փաստաթուղթ.	Էլեկտրոնային կապուղիներով ՀՀ ներմուծվող կամ ՀՀ-ից արտահանվող տեղեկատվության և դրամական փոխանցումների վերաբերյալ
Ամսաթիվը.	2008 թվականի օգոստոսի 1
Համարը.	1
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 27 (301), 15/08/2008թ
Ուժի մեջ է.	25 օգոստոսի 2008թ.

Համառոտ նկարագիր

Պարզաբանվել են Էլեկտրոնային կապուղիներով ՀՀ ներմուծվող կամ ՀՀ-ից արտահանվող տեղեկատվության և դրամական փոխանցումների տեղափոխման հետ կապված հարաբերությունները: Ընդգծվել է, որ **Էլեկտրոնային կապուղիներով** ՀՀ ներմուծվող կամ ՀՀ-ից արտահանվող տեղեկատվությունը և դրամական փոխանցումները չեն համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխում և ենթակա չեն մաքսային ձևակերպումների:

2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ

Փաստաթուղթ.	“Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի սեպտեմբերի 10
Համարը.	ՀՕ-159-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 63 (653), 22/10/2008թ.
Ուժի մեջ է.	01 նոյեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Օրենքի 169.2-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ համաձայն որի հարկ վճարողների կողմից պետական վիճակագրական հաշվետվությունները և պետական վիճակագրական դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված կարգի խախտումով ներկայացնելը առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում:

Առանձնահատկությունն այն է, որ **քաղաքացիների կողմից** օրենքով նախատեսված համատարած հաշվառումների ժամանակ հարցաթերթով նախատեսված տեղեկությունները տրամադրելուց հրաժարվելը առաջացնում է **տուգանք՝ 5 հազար դրամի չափով**:

Փաստաթուղթ.	“Պետական տուրքի մասին” ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 22
Համարը.	ՀՕ-178-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (659), 26/11/2008թ.
Ուժի մեջ է.	06 դեկտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով տարանջատվել է անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման և անհատ ձեռնարկատերերի կողմից մեկից ավելի ու կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար սահմանված **պետական տուրքի գումարի** չափը առաջինի դեպքում սահմանվելով բազային տուրքի 25-ապատիկի չափով:

Փաստաթուղթ.	“Լիցենզավորման մասին” ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 22
Համարը.	ՀՕ-179-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 69 (659), 26/11/2008թ.
Ուժի մեջ է.	06 դեկտեմբերի 2008թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով տարանջատվել է անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպումը և անհատ ձեռնարկատերերի կողմից մեկից ավելի ու կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպումը **որպես լիցենզավորման ենթակա** առանձին գործունեության տեսակների:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը.	2008 թվականի հոկտեմբերի 16
Համարը.	1243-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 67 (657), 12/11/2008թ.
Ուժի մեջ է.	01 հունվարի 2009թ.

Համառոտ նկարագիր

Գործուղման հարցերը կարգավորող որոշման մեջ կատարվեցին մի քանի փոփոխություններ.

- հստակեցվեցին **Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն գործուղման դեպքում նորմաների** հարցերը
- ՀՀ և ԼՂՀ տարածքի համար սահմանվեց **ճանապարհաձախսի նվազագույն չափ**՝ հիմք ընդունելով ավտոբուսային փոխադրումները
- **Նորովի** շարադրվեցին գիշերավարձի ու օրապահիկի նորմաները, մասնավորապես ՀՀ տարածքի (այժմ՝ նաև ԼՂՀ տարածքի) համար **օրապահիկը նախկին 720 դրամի փոխարեն սահմանվեց 2000 դրամ**:

Փաստաթուղթ.	“Լիցենզավորման մասին” ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի օգոստոսի 21
Համարը.	ՀՕ-156-Ն
Հրատարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 59 (649), 24/09/2008թ.
Ուժի մեջ է.	06.10.2008թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով սահմանվել է մաքսային գործի հետ կապված **լիցենզավորման ենթակա գործունեության նոր տեսակ՝ “մաքսային հսկողության տարածքների կազմակերպում”**: Բացի այդ վերը նշված գործունեության բոլոր տեսակների համար սահմանվել է լիցենզավորման բարդ ընթացակարգ:

Փաստաթուղթ.	“Պետական տուրքի մասին” ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը.	2008 թվականի օգոստոսի 21
Համարը.	ՀՕ-157-Ն
Հրատարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 59 (649), 24/09/2008թ.
Ուժի մեջ է.	06.10.2008թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով մաքսային հսկողության տարածքի կազմակերպման գործունեության համար սահմանվել է պետական տուրք՝ տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով:

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

3.1 Կառուցվածք և գործառույթներ

ՀՀ կառավարության 04.12.2008 թվականի նիստում հավանության է արժանացել՝ “ՀՀ կառավարության 04.09.2008թ. թիվ-1005-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Համաձայն կատարված փոփոխությունների. կառուցվածքի առումով վերահաստատվել է նոր միացյալ **ՊԵԿ-ի վերադաս մարմնի կառուցվածքը**, միացել են մի քանի նույնանուն ստորաբաժանումներ, լուծարվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության ուսումնական կենտրոնը:

Միաժամանակ ներկայիս գործող հարկային (տարածքային) տեսչությունների թվաքանակը կրճատվել է 14 ՀՏ (ՏՀՏ)-ով՝ դառնալով 39 հարկային (տարածքային) տեսչություններ:

Պետք է նշել, որ այդ կրճատվող ՏՀՏ-ների ընտրությունը կատարվել է **բազմաթիվ գործոնների հաշվառմամբ**: Միաժամանակ, հարկ վճարողների համար սպասարկման ծառայությունները մատչելի լինելու, ինչպես նաև ընթացիկ հսկողական աշխատանքներում ռիսկերը փոքրացնելու նպատակով նախատեսվում է առայժմ տարածքներում շարունակել պահել սպասարկման և գանձումների բաժինների ոչ մեծաքանակ անձնակազմ:

Ներկայումս հաստատված են ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի հրամանով Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության գործառույթները, հիմնված ֆունկցիոնալ կառավարման սկզբունքների վրա: Նախատեսվում է դրա հիման վրա քննարկման դնել ու **հաստատել նաև ՏՀՏ-ների գործառույթները**:

3.2.1 Ծրագրեր և կատարողականություն/ հարկային ծառայության մասով/

Հարկային վարչարարության բնագավառում իրականացվող բարեփոխումների համատեքստում մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագիրը¹: Ծրագիրը հիմնված է եղել ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության ծրագրի, հարկաբյուջետային ոլորտը կարգավորող օրենքների, միջազգային և ՀՀ վերջին տարիների առաջավոր փորձի՝ հարկերին վերաբերվող դրույթների վրա: Ծրագիրը բարեփոխումների հաջող ընթացքն ապահովելու համար նախատեսում է **7 հիմնական նպատակներ**.

1. Խոշոր բիզնեսի ճիշտ, լիարժեք եվ ժամանակին հարկման ապահովում
2. Փոքր բիզնեսի համար արդյունավետ հարկային բեռի սահմանում՝ «փափուկ» հարկային վարչարարության կիրառմամբ

¹ ՀՀ կառավարության 07.08.08թ. «ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագիրը հաստատելու մասին» N 941-Ն որոշում (ՀՀՊՏ N 55(645), 03.09.08թ.)

3. Հարկային մարմնում կոռուպցիայի հաղթահարում
4. Հարկային պարտավորությունների կամավոր վճարման (ինքնագնահատման) սկզբունքի ամբողջական ներդրում
5. Հարկային ստուգումների նոր քաղաքականություն
6. Հարկային մարմնի կառավարման արդյունավետ համակարգի ներդրում
7. Հարկային վարչարարության տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարման ապահովում

Այս նպատակների իրագործման համար սահմանված են 109 միջոցառումներ²:

Այսպիսով, **109 միջոցառումներից`**

- 79 միջոցառումներ սկսվում են 2008թ.-ից , որից
 - ա) 31 միջոցառումներ նախատեսվում է ավարտել 2008թ.-ին
 - բ) 48 միջոցառումներ ունեն շարունակական ժամկետ
- 30 միջոցառումներ սկսվում են հետագա ժամականաշրջանում (մեծամասամբ` 2009թ.-ից): Ամբողջությամբ կատարվել են, մասնավորապես, հետևյալ միջոցառումները.

• *Փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների (ՓՄՁ) դասակարգման նոր համակարգի մշակում ու ներդրում հարկային օրենսդրության կիրառման նպատակով (3-րդ միջոցառում):*

ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ մշակվել է փոքր ձեռնարկատիրական գործունեության ոլորտում հարկային օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որտեղ սահմանված է **շեմ ԱԱՀ վճարող համարվելու համար (58.35 մլն դրամ):** 2008թ. օգոստոսի 21-ին օրենսդրական փոփոխությունների փաթեթն ընդունվել է ՀՀ ԱԺ կողմից³:

• *Հարկային ծառայությունում “ներքին աուդիտի” առանձնացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում և գործառույթների հաստատում: Ըստ ծրագրի նախատեսվում է, որ այդ ստորաբաժանումը պետք է ունենա պատշաճ հաշվետվականություն և թափանցիկություն (26-րդ միջոցառում):*

• *Հարկային ծառայության գործողությունների նկատմամբ բողոքարկման ընթացակարգերի բարելավում` վերանայելով գանգատարկման հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջադրման կարգը և գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը(30-րդ միջոցառում):*

Հաստատվել են ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 06.06.08թ. «Հարկային գանգատարկման հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջարկման կարգը սահմանելու մասին» թիվ 06-Ն և « Հարկային մարմնում գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին ներկայացվող դիմում-գանգատի ձևը և դիմում-գանգատ ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը սահմանելու մասին» թիվ 07-Ն հրամանները:

• *Սոցիալական գործընկերության շրջանակներում հարկային ծառայության պետին կից խորհրդի ստեղծում` ընդգրկելով պետական կառույցների, գործատուների միության, արհեստավարժ և գործարար միությունների, միջազգային կառույցների և միջազգային ծրագրերի ներկայացուցիչներին (45-րդ միջոցառում):*

Հաշվի առնելով հարկային, մաքսային մարմինների միավորման գործընթացը` վերահաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին կից հասարակական խորհրդի նորացված կազմը` ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.10.08թ. «Հարկային և մաքսային վարչարարության կատարելագործման հասարակական խորհրդակցական մարմին ստեղծելու մասին» թիվ 1-06/452-Ա հրամանով:

• *Հարկային վիճակագրական ամսական պարտադիր տեղեկատուի հրապարակում (նաև հարկային ծառայության ինտերնետային կայքում) (39-րդ միջոցառում):*

² Ծրագրից բխող միջոցառումների ժամկետները և պատասխանատուները հաստատվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով (05.11.08թ, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի «ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագրից բխող 2008թ. ընթացքում (մասնակիորեն կամ ամբողջությամբ) կատարման ենթակա միջոցառումներն ըստ կատարման պատասխանատուների, ժամկետների և արդյունքների» թիվ 1-06/462-Ա հրաման)

³ ՀՀՊՏ 24.09.08թ. N 59(649)

⁴ ՀՀՊՏ 64(654)

Հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 21.10.08թ. «Հարկային վարչարարական (վիճակագրական) որոշ ցուցանիշների պարբերական հրապարակումների մասին» թիվ 1-06/445-Ա հրամանը: **Առաջին հարկային վիճակագրական տեղեկատու** լույս է տեսել 2008թվականի հոկտեմբերի 20-ի դրությամբ և տեղադրվել Ինտերնետային կայքում:

• *Հարկային ծառայողների համար մրցույթի և ատեստավորման կարգի վերանայման նպատակով օրենսդրական փոփոխությունների նախապատրաստում և ներկայացում*

Ընդունվել է ՀՀ կառավարության 16.10.08թ. «ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 3-ի N 1798-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1181-Ն որոշումը⁴

• *ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի հետ առանձին ծրագրի մշակում և միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում (սեմինարներ, կլոր սեղաններ և այլն) (19-րդ միջոցառում):*

• *Հարկային ծառայության կենտրոնական ապարատում գործառույթների վրա հիմնված կառուցվածքի և ստորաբաժանումների գործառույթների սահմանում:*

3.2.2 Ծրագրեր և կատարողականություն/ մաքսային ծառայության մասով/

Մաքսային վարչարարության բնագավառում իրականացվող բարեփոխումների համատեքստում մշակվել է ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2008-2012 թ.թ. ծրագիրը, որը հիմնված է ՀՀ կառավարության 2008-2012թ.թ. գործունեության ծրագրի և միջազգային լավագույն փորձի վրա: Այդ փաստաթղթի նպատակն է նախանշել այն բոլոր աշխատանքները, որ պետք է իրականացվեն առաջիկա 4 տարիների ընթացքում մաքսային վարչարարությունը բարելավելու նպատակով: Փաստաթուղթը կազմվել է հետևյալ կերպ. նախ ներկայացվել են այն 7 հիմնական սկզբունքները, որոնց անհրաժեշտ է հետևել մաքսային վարչարարությունը կատարելագործելու համար, այնուհետև ներկայացված են այն քաղաքականությունները, որոնց իրականացման միջոցով հնարավոր կլինի հասնել սահմանված նպատակներին և դրանից հետո միայն ներկայացված են կոնկրետ միջոցառումներ, որոնք բխում են այդ քաղաքականություններից: Ընդհանուր առմամբ ստացվել է 57 միջոցառում, որոնք պետք է իրականացվեն մինչև 2012 թվականի ավարտը: 7 հիմնական սկզբունքներն են.

- Տնտեսվարող սուբյեկտների միջև մաքսային (հարկային) բեռի արդարացի բաշխում.

- Մաքսային ծառայության արդյունավետ կառավարման համակարգի ստեղծում.

- Ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության համակարգի ներդրում և զարգացում.

- Ինքնահայտարարարման համակարգի ընդլայնում և մաքսային միջնորդի ինստիտուտի զարգացում.

- Մաքսային ընթացակարգերի պարզեցում.

- Այլ մարմինների հետ արդյունավետ համագործակցություն ապահովում.

- Մաքսային մարմինների տեխնիկական վերազինում:

Մինչև 2008 թվականի չորրորդ եռամսյակի ավարտը նախատեսվում է ավարտի հասցնել 57 միջոցառումներից 18-ը:

3.3.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների / հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ ՀՊԾ 06.06.2008 թվականի՝ “Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը, հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի ներկայացվող դիմում գանգատի ձևը և դիմում-գանգատ ներկայացրած անձի նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը սահմանելու մասին” N-07-ն, ինչպես նաև՝ 06.06.2008թ. “Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջարկման կարգը սահմանելու մասին” N 06-ն հրամաններով սահմանվել են **գանգատարկման հանձնաժողովի նոր առավել թափանցիկ աշխատակարգը՝ նորացված կազմով:**

Հանձնաժողովն իր նիստերը գումարում է շաբաթական 1 անգամ: Նոյեմբեր ամսվա անցած ժամանակահատվածի ընթացքում քննության են առնվել հարկային ակտերի կամ հարկային մարմնի աշխատակիցների գործողությունների կամ անգործության վերաբերյալ հարկատուների **13 բողոք-գանգատներ, որոնցից բավարարվել են 2-ը, իսկ 1-ը բավարարվել է մասնակի:** Ընդ որում վերը նշված բողոք-գանգատների վերաբերյալ որոշումները տեղադրված են ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մասի պաշտոնական ինտերնետային կայքում՝ (<http://www.taxservice.am/>):

3.3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների /մաքսային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե նախագահի 2008 թվականի հուլիսի 28-ի թիվ 99-Ա հրամանով հաստատվել են ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի **գանգատարկման հանճնաժողովի անհատական կազմը և կարգը**:

3.4.1 Միջազգային համագործակցություն /հարկային ծառայության մասով/

1. Հոկտեմբերի ընթացքում ՀՀ ԿԱ պետի առաջին տեղակալ Ա.Զիլինգարյանը հայ-ամերիկյան տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի կազմում ԱՄՆ գործուղման ժամանակ քննարկել է **ԱՄՆ-Հայաստան հարկային համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսելու հարցը**: Ամերիկյան կողմը հակված է բավարարվել ԱՄՆ ազգային ու ՀՀ ազգային օրենսդրության դրույթներով, մասնավորապես այն մասով, որ վերաբերվում է կրկնակի հարկման վերացմանը՝ դրսում վճարված երկրում վճարված հարկի հաշվանցմանը: Հայաստանյան կողմի առաջարկով պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել հարցի քննարկումը, մասնավորապես ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը պետք է ՀՀ ֆինանսների նախարարության հետ միասին պատրաստի այդպիսի համաձայնագիր ունենալը հիմնավորող համապատասխան Տեղեկանք ու ներկայացնի ԱՄՆ կողմին մոտակա 3 ամիսների ընթացքում: Հանդիպման ժամանակ խոսք է գնացել նաև մաքսային հարցերում համաձայնագիր ունենալու նպատակահարմարության մասին:

2. Վերջին օրերիս ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցիչի կողմից հաստատվեց, որ այդ կառույցը ֆինանսավորելու է 8 ամսյա մի հարկային ծրագիր: Մեր խնդրանքով իրականացվելու են **ռիսկի գործոնների վրա հիմնված ստուգումների (ներառյալ ԱԱՀ գերավճարի վերադարձման հարցերը) թեմայի շուրջ** խորհրդատվություն և համապատասխան համակարգչային ծրագրի ավարտի հասցնելը: Աշխատանքները սկսվելու են 2009թվականի հունվարի 12-ից: Միաժամանակ նույն ամերիկյան խմբի օժանդակությամբ նախապատրաստվելու են նյութեր միջնաժամկետ մեկ այլ ամերիկյան ծրագրի նախապատրաստման համար:

3.4.2 Միջազգային համագործակցություն /մաքսային ծառայության մասով/

Նոյեմբերի 19-21-ը ք.Սանկտ-Պետերբուրգում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի գլխավորությամբ մաքսային ծառայության պատվիրակությունը մասնակցել է ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 48-րդ նիստի աշխատանքներին: Քննարկվել են և որոշումներ են ընդունվել հետևյալ հարցերի շուրջ. ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ոլորտում միջազգային իրավական բազայի վերանայման հարցեր, ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների Խորհրդի նիստերի համար նյութերի նախապատրաստման կանոնակարգը, ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների Խորհրդի կրծքանշանների հաստատման հարցը, մաքսային ծառայությունների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման հնարավորությունների հարցը, Խորհրդի 2009թ աշխատանքների ծրագրերի և այլ աշխատանքների քննարկումներ:

Նիստի ընթացքում տեղի են ունեցել ԱՊՀ մասնակից-պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների Խորհրդի նախագահի ընտրությունները և Խորհրդի քարտուղարի նշանակումը: Նիստի արդյունքում ստորագրվել է ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվության փոխանակման մասին Արձանագրությունը, ինչպես նաև ԱՊՀ ՄՕՂԽ 10 որոշում:

ԱՊՀ ՄՕՂԽ ստեղծման 15-ամյակի կապակցությամբ տեղի ունեցան մեդալներով պարգևատրման և պատվոգրերի հանձնման արարողություններ: ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների միջև համագործակցության ամրապնդման և ներդրված ծառայությունների համար Գ.Խաչատրյանը պարգևատրվեց Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության Միջազգային համագործակցության զարգացման համար՝ նշանով, Կ.Բեզլարյանին շնորհվեց մեդալ Մաքսային համագործակցության ամրապնդման համար, Ա. Հովսեփյանը պարգևատրվեց պատվոգրով ԱՊՀ մասնակից պետությունների միջև մաքսային համագործակցության զարգացման գործում ակտիվ մասնակցության համար, Ս.Մելիք-Իսրայելյանը պարգևատրվեց պատվոգրով ԱՊՀ մասնակից պետությունների միջև մաքսային համագործակցության զարգացման գործում ակտիվ

մասնակցության համար և շնորհակալագրով ԱՊՀ մասնակից պետությունների միջև մաքսային ոլորտում համագործակցության զարգացման գործում մեծ ավանդի համար:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հայցի հիման վրա Եվրոպական Հանձնաժողովի TAIEX գործիքի միջոցով հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Մաքսային ընթացակարգերի պարզեցումը որպես արտաքին առևտրի խթանման կարևոր գործիք՝ խորագրով սեմինար /30-31 հոկտեմբերի 2008թ., ք.Երևան/:

- Սակագների և ծագման երկրի վերաբերյալ սահմանված տեղեկատվություն՝ թեմայով ուսումնական այց /17-20 նոյեմբերի 2008թ., ք.Վիլնյուս/:

Ռիսկի կառավարում՝ թեմայով Եվրամիության փորձագետների այց /2008թ նոյեմբերի 24-28 ք.Երևան/:

3.5.1 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային ծառայության մասով/

Վերջին ամիսներին մի քանի հարյուր անձինք մասնակից դարձան Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ միասին ՀՀ ԿԱ ՊԵԿ իրագործած “Հարկային համակարգ” դասընթացների:

Սույն թվականի նոյեմբերի 19-ին հայտարարվել է մրցույթ՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության թափուր հաստիքները համալրելու նպատակով: Զետեղումն կատարվել է “Հայաստանի Հանրապետություն” օրաթերթում և <http://www.taxservice.am>: Մրցույթը հայտարարված էր ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության վերադաս մարմնի 7 և Երևանի և մարզերի տարածքային հարկային տեսչությունների 17 թափուր աշխատատեղերի համար: 03.12.2008թ. դրությամբ **մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնաձևների թիվը կազմել է 143 մարդ**, որոնցից 37-ը պայքարելու են վերադաս մարմնում, 58-ը՝ մայրաքաղաքի տարածքային հարկային տեսչություններում, 58-ն էլ մարզերի տարածքային հարկային տեսչություններում աշխատելու իրավունքի համար: Ուշագրավ է այն փաստը, որ “Հարկային համակարգ” դասընթացի շրջանավարտներից մրցույթին մասնակցելու որոշում են կայացրել 28-ը (որոնցից 13-ը դասընթացների ընթացքում ցուցաբերած էին եղել գերազանց առաջադիմություն):

Մրցույթը կանցկացվի 2008 թվականի դեկտեմբերի 18-ին:

3.5.2 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /մաքսային ծառայության մասով/

Վերջին ամիսներին հարյուրից ավելի անձինք մասնակից դարձան Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ միասին ՀՀ ԿԱ ՊԵԿ իրագործած “Մաքսային գործ” դասընթացների:

Սույն թվականի նոյեմբերի 12-ին հայտարարվել է մրցույթ՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության թափուր հաստիքները համալրելու նպատակով: Մրցույթի վերաբերյալ գետեղումն կատարվել է “Հայաստանի Հանրապետություն” օրաթերթում և [www. customs.am](http://www.customs.am) ինտերնետային կայքում: Մրցույթը հայտարարված էր ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի **մաքսային ծառայության վերադաս մարմնի 20 և տարածաշրջանային մաքսաստների 5 թափուր աշխատատեղերի համար**:

Մրցույթը կանցկացվի 2008 թվականի դեկտեմբերի 12-ին:

3.6.1 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և “Թեժ գծի” վերլուծություն / հարկային ծառայության մասով/

ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի նախագահի 28 նոյեմբերի 2008թ. N 1-6/494-Ա հրամանի, հաստատվել է «Թեժ գծի» միջոցով ստացված հարցադիմումների մշակման նոր ընթացակարգ: Համաձայն կարգի՝ «Թեժ գծից» կարող է օգտվել ցանկացած անձ: Ստացված դիմում-բողոքները կամ առաջարկությունները նույն օրը ներկայացվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի համապատասխան տեղակալին, վերջինս էլ այն մակագրում է համապատասխան ստորաբաժանմանը: ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը 2, իսկ հիմնավոր պատճառաբանման դեպքում՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանը պատրաստում և ներկայացնում է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալին: Հաստատվելուց հետո, 1 աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսազանգի միջոցով պատասխանը փոխանցվում է հարցադիմում ներկայացնողին: Հարցադիմումները և պատասխանները արխիվացվում են: **Միաժամանակ հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին և տեղադրվում ՀՀ ԿԱ**

ՊԵԿ-ի հարկային մասի պաշտոնական ինտերնետային կայքում:

Օրական միջին հաշվով ստացվում է 3-4 զանգ: 2008թ. նոյեմբեր ամսի անցած ժամանակահատվածում ստացվել է 70 զանգ, որից 19 եղել են բողոքներ և մասնագիտական հարցեր՝ կապված հարկային օրենսդրության հետ: Բողոքների հիմնական մասը առնչվել է առևտրի իրականացման վայրերում ՀԴՄ կտրոնների չտրամադրման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ վերաբերել է հարկային օրենսդրության մեջ կատարված վերջին փոփոխությունների կիրառման մեխանիզմներին և ժամկետներին: **Զանգերից պարզվել է, որ հարկատուների մի մասը ծանոթ չէ հարկային ծառայության պաշտոնական կայքէջին:**

3.6.2 Հետադարձ կապ մատույլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

«Թեժ գծով» հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 20-ն արձանագրվել է 13 բողոք և առաջարկություն, որոնք հիմնականում վերաբերել են **գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի որոշման, ապրանքի գնահատման, ինչպես նաև մակնշման** ու որոշ ապրանքների արտահանման թույլտվություն ստանալու հետ կապված հարցերին: Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ գրավոր պատասխան է տրվել, կամ էլ հրավիրել են Մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

Նշված ժամանակահատվածում «Թեժ գծով» օրական արձանագրվել է միջինը 25-30 զանգ: Զանգահարողների մեծ մասին հետաքրքրել են կոմիտեի պաշտոնական կայքից օգտվելու ձևերը: Նրանց զգալի մասը նաև հետաքրքրվել են մաքսային միջնորդների /բրոքերների/ համար անցկացվող դասընթացներով /դասընթացների անցկացման վայրի և ժամկետների ճշտում/: Զանգահարողներին հետաքրքրել են նաև կոմիտեի ստորաբաժանումների տարբեր հեռախոսահամարներ ու մաքսային մարմիններից խորհրդատվություն ստանալու կարգը:

Հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 20-ն արձանագրված բոլոր բողոքներին արձագանքվել է:

3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր

ՀՀ ԳՄ ՊԵԿ նախագահի 21 հոկտեմբերի 2008թ. թիվ 1-06/445-Ա հրամանով հաստատվել ու նոյեմբերի 19-20 հատվածում **առաջին անգամ պաշտոնապես հրապարակվել է հարկային վիճակագրական տեղեկատու**⁵: Ստորև ներկայացվում են քաղվածքներ այդ նյութից:

			2008 թվական		
			1	2	3
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ	հատ	1900	206,979	112.5
2	Հարկային մարմնի կողմից պետ բյուջե հավաքված հարկային եկամուտներ, այդ	մլն. դրամ	3,8565.4	361,732.5	121.2
2.1	ՄԱՀ	մլն. դրամ	1,389.0	95,696.6	136.5
2.2	Շահութահարկ	մլն. դրամ	5,285.3	71,147.5	118.4
5	Անցիկային հարկ ⁵ http://www.taxservice.am/index.php?id=2237	մլն. դրամ	1,099.3	10,667.8	105.2
					17
2.4		դրամ	4,235.3	42,824.7	118.6

3	Հարկային մարմնի կողմից կատարված հարկային ստուգումներ	հատ	871	2101	69.7
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ	մլն. դրամ	2,005.6	32,635.4	179.8

3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

Ցուցանիշ		Չափի միավոր	2007թ.	2008թ.		Աճի ¹ տեմպը %
			Հունվար-հոկտեմբեր	Հունվար-հոկտեմբեր	Հոկտեմբեր	Հունվար-հոկտեմբեր
1	Մաքսային մարմնի կողմից պետ բյուջե հավաքագրված մաքսային եկամուտներ	մլն. դրամ	160,658	236,622	31,977	147.3
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը	հատ	25,357	29,204	5,492	115.2
3	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն. դրամ	1,197,273	1,395,133	178,448	116.5
3.1	Արտահանում	մլն. դրամ	321,574	284,870	33124	88.6
3.2	Ներմուծում	մլն. դրամ	875,699	1,110,264	145,324	126.8

¹ Նախորդ տարվա նույն (աճողական) ժամանակահատվածի նկատմամբ

⁶ Նախորդ տարվա նույն (աճողական) ժամանակահատվածի նկատմամբ